# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 179-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-088-0055-0050 ԾԱԾԿԱԳՐԻ 0,056997 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով , ՀՀ «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ , 8-րդ մասերով, 61 հոդվածի առաջին կետով , 67-րդ , 68-րդ , 70-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 463,464 հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու` 21 հունիսի 2022 թվականի թիվ 41-Ա և Շնող համայնքի ղեկավարի` 23 հունիսի 2022 թվականի թիվ` 152-Ա որոշումները, աճուրդային հանձնաժողովի` 25.07.2022 թվականի Ձև 5,6 արձանագրությունները`**որոշում եմ .**

1. ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի սեփականություն հանդիսացող` 06-088-0055-0050 ծածկագրի 0,056997 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը 315000 (երեք հարյուր տասնհինգ հազար ) ՀՀ դրամ արժեքով վաճառել աճուրդի հաղթող Գյուլնարա Սուրենի Պետրոսյանին:
2. Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, ընդգրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ______________ ____
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 180-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ GAZ 3221 ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով , ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 463,464 հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 21 հունիսի 2022 թվականի թիվ 46-Ա որոշումը, աճուրդային հանձնաժողովի՝ 26.07.2022 թվականի Ձև 5,6 արձանագրությունները՝**որոշում եմ .**

1. ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի սեփականություն հանդիսացող՝ GAZ 3221 մակնիշի ,376 UL 38 պետհամարանիշով , 2001 թ. արտադրության, 10 և ավելի նստատեղ ունեցող հատուկ բժշկական մարդատար ավտոմեքենան 168 000 (մեկ հարյուր վաթսունութ հազար ) ՀՀ դրամ արժեքով վաճառել աճուրդի հաղթող Հրանտ Երվանդի Հարությունյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. _______________ _____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 181-Ա

### ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով , ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 որոշմամբ հաստատված կարգով՝ **որոշում եմ .**

1. ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքին տալ շինարարության թույլտվություն ՝ ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի «Հեքիաթ» մանկապարտեզի բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20__ թ. ________________ ____
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 182-Ա

## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով , ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 որոշմամբ հաստատված կարգով՝ **որոշում եմ .**

1. ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքին տալ շինարարության թույլտվություն ՝ ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի Շնող բնակավայրի կենտրոնական այգու վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ______________ ____
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 183-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգրքի» 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանիների 2022թ. սեպտեմբերի 25-ի կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը

1.Շնող համայնք, Շնող բնակավայր , փող 1, շենք 68 - 10քմ
2. Շնող համայնք, Շնող բնակավայր , փող 2, շենք 2 - 20քմ
3. Շնող համայնք , Թեղուտ բնակավայր , փողոց 1, 16-րդ տան ցանկապատին
4. Շնող համայնք , Թեղուտ բնակավայր , փողոց 1, 8-րդ տան պատին
5. Շնող համայնք , Քարկոփ բնակավայրի կենտրոնական հրապարակ - 25քմ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2022թ. հուլիսի 27
գ.Շնող

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 184-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ 2022Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգրքի» 18-րդ հոդվածի 1-ին մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ **որոշում եմ.**

1.ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանիների 2022թ. սեպտեմբերի 25-ի կայանալիք համամասնական ընտրակարգով ընտրությունների անցկացման համար ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի տարածքում սահմանել տեղամասային կենտրոններ՝

1) «Շնողի մշակույթի տուն » ՀՈԱԿ -ի շենքը /հասցե՝ գ.Շնող ,փողոց 3 , շենք 1/
2)«Շնողի մանկական արվեստի դպրոց » ՀՈԱԿ -ի շենքը /հասցե՝ գ. Շնող,փողոց 1 , շենք 57/
3) «Թեղուտի մշակույթի տուն » ՀՈԱԿ -ի շենքը /հասցե ՝ Թեղուտ բնակավայր , փողոց 1 , շենք 3/
4) Քարկոփի ակումբի շենքը / հասցե ՝ Քարկոփ բնակավայր, փողոց 1, շենք 10 /
2.Հանձնարարել ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիլյանին սահմանված ժամկետում տեղամասային կենտրոնների մասին տեղեկացնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

20 22թ. հուլիսի 27
գ.Շնող

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 77608120, shnogh.lori@mta.gov.am shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 185-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 20 ՀՈՒԼԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 174-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով ,33-րդ,34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ .**

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի՝ 20 հուլիսի մայիսի 2022 թվականի թիվ 74-Ա-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման 2-րդ կետի «10840 (տասը հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամի չափով» արտահայտությունը կարդալ նոր՝ «18055 (տասնութ հազար հիսունհինգ) ՀՀ դրամի չափով» արտահայտությամբ :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

20 __ թ. ______________ _____
գ.Շնող